

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

ՈՐՈՇ ՈՒ Մ 45/1

30 հոկտեմբերի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով Ա/Ձ Ալինա Գրիգորյանի կողմից « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2114847 ստուգման ակտի դեմ բերված բողոքը և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ պետի ժ/պ 15.08.2012թ. թիվ 2114847 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ալինա Գրիգորյանի մոտ « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում, որն ընդգրկել է 12.03.2009թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Արդյունքում կազմվել է Հրազդանի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2114847 ստուգման ակտը, որով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

Ա/Ձ Ալինա Գրիգորյանի կողմից « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2114847 ստուգման ակտի դեմ « ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերվել է բողոք: Որից հետո « ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 30.10.2012թ-ի գրությամբ Ա/Ձ Ալինա Գրիգորյանի կողմից բերվել է միջնորդություն, որով վերջինս խնդրել է, որպեսզի Հրազդանի ՏՀՏ 03.10.2012թ. թիվ 2114847 ստուգման ակտի դեմ բերված բողոքը թողնվի առանց քննության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> « օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Ալինա Գրիգորյանի բողոքի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ա/Ձ Ալինա Գրիգորյանի բողոքի հիման վրա « ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ